

ների մեկնութեան նուիրուած(*) : Նչեցու այս աշխատութեան մէջ բացի գիտական-մատենագրական կէտերից ցրուած են և մշակոյթի զանազան խնդիրների վերաբերեալ նկատողութիւններ և տեղեկութիւններ, որոնք օգտակար կարող են լինել համապատասխան ճիւղի համար, օրինակ ճարտարապետական տերմինների, զէնքի և ամրոցների, զգեստի, ժողովրդի հաւատալիքի և այլն :

Նորա երկրորդ մեծ աշխատութիւնը Քերականութիւնն է, նոյնպէս քաղուածք նախնեաց նման գործերից. նա ինքը յաճախ յիշում է Դաւթի անունը և վկայութիւններ բերում. այսպէս ներածութեան մէջ, ուր բացատրում է քերականութեան գիտն ու նշանակութիւնը. «այլ զայս ուսանիմք ի նախերգանէ եռամեծին Դաւթի փրկիտփայլի, որ ասէ այսպ. «Յերկու իմն պատճառաց...» և այլն(**) : Ուրիշ տեղերում էլ ընթերցողին մատնացոյց է անում իրենից առաջ աւելի ընդարձակ մեկնիչների վերայ. օր. «Յաղագս բայի» գլխի վերջում. «արդ ի մեկնիչն այլ յերկար ունի բանս, բայց մեք ի կարճելն ջան եղաք» : «Յաղագս յաւղի» գլխի վերջում 120բ. «Իսկ դու, ո՛վ ուսումնասէր, թէ կամիս ի լիսն վայելել, ընդարձակեալ է ի կատարեալ մեկնութիւն սրբոցն» : աւելի պարզ. «Յաղագս մակբայի» վերջում 129բ. «Ա՛րդ, որ ինչ յղգս. մակբայիս կարճ և համառօտ տեսութիւք. էին, գրեցաւ, լծեալ ընդ բնաբանին (Քրականացու քերականութիւնն է), իսկ դու այլ ընդարձակ ունիս տենչումն, ընդարձակեալ է առաջի քո ոմանց մեկնուղաց առատ և լայն քննութիւք., միայն զմեզ անպարսաւս թողցես» : կամ 142ա. «Այսօրիկ են խրատք վերծանութիւ. զոր յղգս. տասն առողանութեցն. փոքր ի շատէ գրեցաք. թերևս զարթուցից զուսումնասէրան ի տենչումն բաղձանաց արուեստիս, զոր կարի նուազեալ տեսանեմք յօքունս : Վս. որոյ զերրորդ մասն զոր յոլորակին ասացաւ, դձլ. աստ երկրորդեցաք, զի հաւատարիմն հաստատեսցի ի ձեզ վերստին յիշմամբս իսկ մեզ մասն բարեաց ընդ աշխատասէրսդ լիցի» : Այսպիսի նկատողութիւններ կան և ուրիշ մասերի նկատմամբ :

Նչեցին ծանօթ է յունարէնին 41ա. յոյները հայերից փոխ են առել մազուն-մաժուն և կովա-կապայ, իսկ «մեք ի նոցանէ զփակեղն (φάχελλας) եւ զկաղամար, զոր կոչեն կալամառ՝ որ է աման գրչի (καλαμαρον), որ առել է Գրիգոր Մագիստրոսից(***) . բայց այստեղ և Արիսպագացու մեկնութեան մէջ յունական տառերով է նշանակում ստորաբաժանումները,

(*) Գոչ Մխիթարի մեկնութիւնը № 373 նս. համեմատել ենք Նչեցու մեկնութեան № 797 ի հետ : Նչեցին օգտուում է աւելի իմաստից, քան բառացի, բայց ակներև է կախումը որոշ տեղերում : Վարդանի հատուածը կար. Յ. № 1404 :
 (***) N. Adonz, Dionisy Trakyskiy i Armyanskié Tolkovateli. Petrograd. 1915. 79 :
 (***) Adonz. Dionisy. Trakyskiy. Petrograd, 1915, եր. 228 :

իսկ քերականութեան մէջ խօսում Մ տառի գծերի մասին և գրում տառը. բայց չենք կարծում, թէ նորա հմտութիւնը մեծ էր բնագիրներից օգտուելու չափ, թէև նորա ուսուցիչ ներսէս Մչեցին լաւ ծանօթ էր յունարէնին և նրանց ժամերգութեան :

Նչեցին իւր Քերականութեան համար օգտուում է նախընթաց մեկնիչներից ոչ անմիջապէս, այլ Յովհաննէս Երզնկացուց. բայց մինչդեռ սա լուսանցքներում ցոյց է տալիս իւր ազբիւրները, Նչեցին հետևում է նոյն կարգին, հատուածներ կապում իրար կրճատումներով կամ փոքրիկ, բացատրական յաւելումներով, մեկնիչների մտքի համեմատ, բայց առանց նրանց անունը յիշելու : Մեկնիչներից, գուցէ, ինկատի է ունեցել միայն Դաւթին, որի անունը յիշուած տեսանք նորա կողմից, բայց այդ էլ օգտուում է ոչ անկախաբար, այլ նոյն խօսքերով և շարայարութեամբ, ինչ որ նկատում ենք Երզնկացու մէջ : Երկու հեղինակներից անկասկած առաջինը Երզնկացին է, որ թէև կապ է պահել Գլաճորի դպրոցի և Նչեցու հետ, բայց Վարդանի աշակերտն էր : Բացի դորանից Երզնկացին իւր յիշատակարանի մէջ պարզում է իւր աշխատութեան ծագման պատմութիւնը, Գրիգոր Մագիստրոսի և զանազան մեկնիչների գլխաւը, նրանցից օգտուելու հանգամանքները. մինչդեռ Յսային հետևում է նոյն դասաւորութեան և մտքերի ընթացքին, առանց յիշելու ազբիւրները : Երզնկացին իւր քերականութիւնը դասախօսել է ՁԼ (= 1281) թուին Կիլիկիայում Յակոբ կաթողիկոսի խնդիրքով, իսկ այդ թուականին Յսային դեռ ևս անկախ ղեկավար չէր Գլաճորի դպրոցի, այլ Ներսեսի աշակերտ և նորա ձեռքի տակ աշխատող : Առաքել Սիւնեցին էլ, ինչպէս կը տեսնէ ընթերցողը ներքևի ծանօթութեան մէջ, վկայում է Յովհաննէս Երզնկացու առաջնութեան մասին(*) : Աւելորդ ենք համարում երկու հեղինակների կապը պարզելու համար համեմատութեան օրինակներ բերել. այդ աղերսը նկատելի է գործի սկզբից մինչև վերջ :

Ինչպէս նախընթացները, այսպէս և Նչեցու երրորդ գործը Դիոնեսիոս Արիսպագացու Յաղագս քահանայութեան Լուծումները գրուած էր զպրոցական

(*) Ձեռ. Էջմ. № 2379/2373, 25ա. «Մեկնութի. քերականի արարեալ Յսայեա վարդապետի» : սկս. «Ի ձեռնտուութենէ հոգւոյն հանդերձեալ եմք բուռն հարկանել» : Երզնկացու քերականութիւն. Ձեռ. Էջմ. № 2359 (կար. 1316) : այս ձեռագիրը քերականութիւնների մի ժողովածու է, ուր ի միջի այլոց կայ և Առաքել Սիւնեցու քերականութիւնը, որ այսպիսի մի հատուած ունի. 389ա. «Թէ յո՞ւմմէ թարգմանեցաւ և ո՛վ էր, որ մեկնութի. արար սր. Պ. (պատասխան) Ձի Դաւիթ փլսփին. թարգմանեաց և մեկնեաց զսայ, իսկ յետ սր. Գրիգոր Մագիստրոսն այլ ը. արձակ մեկնեաց զԴաւթի մեկնելն. իսկ յետոյ Յոհաննէս վրդն. մականուն Պուզ համառօտեաց, վս. զիւրայուր լինելոյ : Եւ յետ նր. Յսայի վղպտն. Գայլիճորոյ այլ համառօտեաց զնոյն, որ այժմս կայ ի միջի, սս. (այսպէս) և Ծործորեցին է համառօտեալ : Արդ բ. մեկնիչ կայ ի գիրքս յայս, առ. ջինն Դաւթի մեկնածն է և երկղն. Ստեփննսին. Սիւնեաց՝ որ ի վայոյ ձորն նսակցւ» :